

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՄԱՍՈՎ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը	
➤ Հայաստանի Հանրապետությունում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեն բարձրաստիճան պաշտոնատար անձը (այսուհետ՝ ԲՊԱ), ԲՊԱ-ի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը: Հոդված 32 «1. Բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքով նախատեսված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր: 2. Բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր:	➤ Ներդնել «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ» հասկացությունը, որը կներառի ոչ միայն բոլոր ԲՊԱ-ներին, այլև հանրային ոլորտի առանձին ծառայությունների մասին օրենքներով սահմանված այլ պաշտոնատար անձանց. ➤ Ներդնել «ընտանիքի կազմ» հասկացությունը՝ դրա ներքո ներառելով՝ տարբերակ 1) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձի ամուսնուն (այդ թվում՝ փաստացի), զավակին (այդ թվում՝ անչափահաս), ծնողին, եղբորը, քրոջը, ինչպես նաև նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին՝ տարբերակ 2) հայտարարագիր ներկայացնելու

¹ Նկատի ունենալով պաշտոնատար անձի կողմից ազգականի միջոցով ակտիվների ավելացման հնարավորությունը, ինչպես նաև հայտարարագրման ապօրինի հարստացման մոդելին անցում կատարելու հանգամանքը՝ նշված խումբ անձանց ներառումը ընտանիքի կազմում հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ բացահայտել ապօրինի հարստացման ռիսկերը (դեպքերը): Մյուս կողմից, պետք է հաշվի առնել ընտանիքի կազմում ընդգրկված առանձին անձանց ինքնուրույնությունը և դրանով պայմանավորված վերջիններիս նկատմամբ օրենքով իրավական, մասնավորապես՝ քրեական պատասխանատվության միջոցներ կիրառելու «սպառնալիքի» իրավաչափ լինելուն առնչվող գործոնները: Հարկ է նկատի ունենալ նաև, որ համատեղ ապրելու հայտանիշը խնդրահարույց է: Եվրոպական պետությունների համապատասխան փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ համատեղության ներքո հասկացվում է համատեղ տնտեսություն վարելը կամ ծախսերը համատեղ հոգալը, ինչով պայմանավորված գործնականում կարող են առաջ գալ բարդություններ: Ընտանիքի կազմում լայն շրջանակի անձանց ներառելու մոտեցումը լայն տարածում չունի (Կոսովո, Մակեդոնիա, Սերբիա և այլն):

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը սույն օրենքով բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանված դեպքերում և կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների հայտարարագիրը»: Հոդված 5, կետ 16. «բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.»: ➤ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շարքում մեծաթիվ են քաղաքական որոշումների կայացման գործընթացին մասնակցություն ունեցող անձինք: Կոռուպցիոն ռիսկերի առաջացման և զսպման առումներով, շահերի բախման և պաշտոնեական դիրքի չարաշահման ռիսկերի հիման վրա պաշտոնների գնահատում իրականացված չէ, և հանրային ծառայության առանձին ոլորտներում պաշտոնների համապատասխան խմբերում ընդգրկված անձինք ներկայումս հայտարարատու չեն հանդիսանում:	պարտականություն կրող պաշտոնատար անձի ամուսնուն (այդ թվում՝ փաստացի), նրա անչափահաս զավակին, նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին, ինչպես նաև նրա հետ համատեղ ապրող ցանկացած այլ անձի². ➤ Որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող դիտարկել պաշտոնատար անձին, ինչպես նաև՝ վերջինիս «ընտանիքի կազմ»-ի մեջ մտնող անձանց: «Ընտանիքի կազմ»-ի մեջ մտնող անձինք իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ են լրացնում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձի հայտարարագրում՝ կրելով պատասխանատվությունն իրենց առնչվող տվյալների արժանահավատության համար (անչափահասի, ինչպես նաև խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի տվյալների արժանահավատության պատասխանատուն պաշտոնատար անձն է). ➤ Սահմանել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձի պարտականությունը տրամադրելու իր և ամուսնու հետ 1-ին աստիճանի արյունակցական կապով կապված անձանց (ամուսին, զավակներ, քույր, եղբայր

² Ընտանիքի կազմում վերոնշյալ անձանց ներառելու մոտեցումը բավական լայն տարածում ունի, որի հիմքում դրված է կախյալության գործոնը (օրինակ՝ Մոլդովա, Լիտվա, Ռումինիա և այլն): Այլ կերպ ասած, պաշտոնատար անձից ֆինանսական կամ այլ կախվածություն չունեցող սուբյեկտներին ընտանիքի կազմում ներառելը նպատակահարմար չի համարվում: Ինչ վերաբերում է պաշտոնատար անձի հետ ազգակցական կապի մեջ գտնվող այլ անձանց, ապա առանձին պետություններում ներդրված են իրավասու մարմնի կողմից նրանցից ըստ անհրաժեշտության լրացուցիչ տվյալներ պահանջելու ընթացակարգեր, որպիսի մոտեցումը կարելի է իրացնել:

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
➤ «Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը» շրջանակը հայտարարագրման տեսանկյունից խիստ հայեցողական է: Ավելին, բացակայում են համատեղ ապրելու հանգամանքը բնորոշող կոնկրետ չափանիշները, իսկ «չափահաս և չամուսնացած» հայտանիշը չի կարող հիմք հանդիսանալ հայտարարագիր պահանջելու համար: Ընտանիքի անդամ հանդիսացող անչափահասների գույքը, ստացված եկամուտները ներկայումս հայտարարագրման ենթակա չեն:	(հարազատ և համահայր կամ համամայր), ծնողներ, ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ամուսնու ծնողներ, ամուսնու զավակներ) մասին տվյալներ:
Հայտարարագրի ձև և բովանդակություն, հայտարարագրման ժամկետներ	
➤ Փոխկապակցված անձանց հայտարարագրերը բովանդակությամբ և ձևով տարբերվում են ԲՊԱ հայտարարագրից: Մյուս կողմից, ԲՊԱ հետ համատեղ ապրող ծնողի, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքի և եկամուտների հայտարարագիրը բովանդակությամբ և ձևով տարբերվում է ԲՊԱ ամուսնու հայտարարագրից: Բացակայում է այդ տարբերությունների կապակցությամբ որևէ օբյեկտիվ հիմնավորում: Այսպես, օրինակ, ԲՊԱ հետ համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի կամ ծնողի դրամական միջոցները հայտարարագրման ենթակա չեն, ինչը խոչընդոտում է հայտարարագրերի արդյունավետ վերլուծությանը և դրա արդյունքում՝ նաև ապօրինի հարստացման ռիսկերի վերհանմանը ել հայտարարագրերը: ➤ Պաշտոնական պարտականությունների ստանձնման/դադարեցման դեպքում հայտարարագիր ներկայացնում է միայն ԲՊԱ-ն, մինչդեռ հայտարարատու փոխկապակցված անձինք ներկայացնում են տարեկան հայտարարագիր՝ տրամադրելով տվյալներ տարեկան կտրվածքով: ➤ Հայտարարագրերը բովանդակում են տվյալներ գույքի և	➤ Ներդրնել մեկ միասնական ձևանմուշի հայտարարագիր՝ ընդլայնելով հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը (այդ թվում՝ շահերին առնչվող). ➤ Օրենքով ամրագրել Հանձնաժողովի՝ հայտարարագրի ձևանմուշը սահմանելու լիազորությունը. ➤ Պաշտոնը ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրում արտացոլել պաշտոնի ստանձնման/դադարեցման պահին գույքի, եկամուտների, փոխկապակցված անձանց, շահերի և պարտավորությունների վերաբերյալ տվյալները, իսկ տարեկան հայտարարագրում՝ համապատասխան տվյալները՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև՝ տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ տվյալները:

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Եկամուտների մասին, սակայն շահերին առնչվող համապարփակ տվյալներ չեն ներկայացվում:	
Հոդված 33. «Հայտարարագրման ժամկետները Բարձրաստիճան պաշտոնատար անձը պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագրերը այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում ներկայացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում հայտարարագրեր են ներկայացնում նաև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:»:	➤ Երկարաձգել հայտարարագրերի ներկայացման ժամկետներն այն հաշվով, որ. ա) պաշտոնի ստանձնման/դադարեցման հայտարարագիրը ներկայացվի 30 օրվա ընթացքում, բ) տարեկան հայտարարագիրը ներկայացվի ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 30-ը:
Հոդված 32. «3. Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելը կատարվում է այլ մարմնի կողմից առաջադրման միջոցով, ապա գույքի և եկամուտների հայտարարագրեր, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքում նաև փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր թեկնածուն ներկայացնում է նաև առաջադրվելիս:»:	➤ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից հանել վկայակոչված դրույթները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ թեկնածուները համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր, որում նշվում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ամսվա 1-ի դրությամբ գույքի կազմը, ինչպես նաև գրանցման փաստաթղթերի ներկայացման ժամկետի ամսվան նախորդող 12 օրացուցային ամիսների ընթացքում ստացված եկամուտները: Հայտարարագրի ձևը (էլեկտրոնային ձևը) և ներկայացման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
Հայտարարագրերի ռեեստր	
➤ Հայտարարագրերի ռեեստրի անխզելի տարրն է հայտարարատու	➤ Սահմանել Հանձնաժողովի՝ հայտարարատու

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
պաշտոնատար անձանց ռեեստրը: Օրենքը, սահմանելով Հանձնաժողովի՝ հայտարարագրերի ռեեստրի վարման գործառույթը, որևէ դրույթ չի բովանդակում հայտարարատուների ռեեստրի վարման մասին: ➤ Բացակայում են նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց և դրանց հայտարարագրերի ռեեստրների վարման կարգը սահմանող դրույթները: ➤ Օրենքը չի բովանդակում դրույթներ հանձնված հայտարարագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Հոդված 43, մաս 1. Հանձնաժողովի գործառույթներից է. «1) բարձրաստիճան պաշտոնատար անձանց և սույն օրենքով նախատեսված այլ անձանց հայտարարագրերի ռեեստրի վարումը.»: Հոդված 37. «1. Հայտարարագիրը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը այն զետեղում է հայտարարագրերի ռեեստրում.»: Հոդված 43, մաս 1. «6) հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի սահմանումը.»:	պաշտոնատար անձանց ռեեստրի վարման գործառույթը. ➤ Ռեեստրի պատշաճ վարման նպատակով սահմանել պետական մարմինների աշխատակազմերի ղեկավարների՝ իրենց մարմիններում հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակման կամ դադարեցման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում և ձևաչափով Հանձնաժողովին ներկայացնելու պարտականությունը: Այդ պարտականությունը չկատարելու համար նախատեսել պատասխանատվության վերաբերյալ դրույթ: ➤ Հանձնաժողովին վերապահել ռեեստրի տվյալների ցանկի սահմանման և դրանում փոփոխություններ կատարելու լիազորություն. ➤ Օրենքով սահմանել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու դեպքերն ու պայմանները. ➤ Հանձնաժողովին վերապահել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը սահմանելու լիազորություն:
Հայտարարագրերի վերլուծություն	
Հոդված 43, մաս 1. Հանձնաժողովի գործառույթներից է. «2) հայտարարագրերի վերլուծությունը և հրապարակումը.»: ➤ Օրենքով հստակեցված չեն «հայտարարագրերի վերլուծության» բովանդակությունը և վերլուծության մեթոդները (հայտարարագրերի տվյալների համադրում և մաթեմատիկական վերլուծություն, տվյալների արժանահավատության ստուգում, ֆինանսական աուդիտ, պաշտոնյայի	➤ Օրենքով սահմանել հայտարարագրերի վերլուծության մեթոդները. ➤ Օրենքով ամրագրել վերլուծության գործընթացը կանոնակարգելու, հայտարարագրերի ընտրանքային խմբերը որոշելու, ռիսկային չափորոշիչներ սահմանելու Հանձնաժողովի լիազորությունները.

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ապրելակերպի» վերաբերյալ մոնիթորինգ և այլն): ➤ Օրենքով սահմանված չեն հայտարարագրերի վերլուծության գործընթացը կանոնակարգելու, հայտարարագրերի ընտրանքային խմբերը որոշելու, ռիսկային չափորոշիչներ սահմանելու Հանձնաժողովի լիազորությունները:	➤ Հայտարարագրված տվյալների արժանահավատությունը ստուգելու նպատակով օրենքով ամրագրել պետական, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ոչ պետական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներին Հանձնաժողովի առցանց հասանելիության ապահովման վերաբերյալ դրույթներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայտարարագրերի հրապարակայնացման կարևոր միջոցներից է պաշտոնատար անձի (մասնավորապես՝ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող) կողմից իր հայտարարագրի վերաբերյալ հրապարակային պարզաբանումների ներկայացումը, այդ թվում՝ հանրության շրջանում առաջացած կասկածների կապակցությամբ՝ առաջարկվում է Հանձնաժողովին վերապահել՝ պաշտոնատար անձի կողմից հանրությանը պարզաբանումներ ներկայացնելու ընթացակարգի սահմանման լիազորություն կամ օրենքով ամրագրել դրույթներ պարզաբանումների ներկայացման շրջանակի, ժամկետների և դրանցից հրաժարվելու դեպքերի վերաբերյալ: ➤ Հանձնաժողովին վերապահել հայտարարագրերի վերլուծության ընթացքում օրենքով սահմանված դեպքերում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանցից հայտարարագիր պահանջելու լիազորություն: Այս պարագայում փոխկապակցված անձը դառնում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող:
Հայտարարագրերի հրապարակում	

ԽՆԴԻՐՆԵՐ/ԲԱՑԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հոդված 37. «2. Հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հրապարակման ենթակա տվյալների ցանկը չի կարող պարունակել անձը, գույքը նույնականացնող տվյալներ:»: ➤ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ հայտարարագրերում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սպառիչ է, և Հանձնաժողովը հնարավորություն չունի հանրության, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության համար մատչելի դարձնել այլ տվյալներ: Գույքի գտնվելու վայրի հասցեն, այդ թվում՝ երկիրը, ՀՀ կառավարության 1835-Ն որոշմամբ ներկայումս փակվում է: ➤ Հայտարարագրերի հրապարակման եղանակի մասին օրենքում հիշատակում չկա: ➤ Հայտարարագրերի հրապարակայնացման ժամկետների մասին որևէ դրույթ սահմանված չէ: Հստակ չէ, թե Հանձնաժողովն ինչ ժամկետում պետք է հրապարակի հայտարարագրերը և որքան ժամանակ դրանք պետք է մնան Հանձնաժողովի կայքէջում: Հստակեցված չեն նաև պաշտոնատար անձի պաշտոնաթողության դեպքում հայտարարագրերի արխիվացմանն ու հրապարակմանն առնչվող հարցերը:	➤ Օրենքով սահմանել հայտարարագրերի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը: Այդ ցանկը սահմանել այն հաշվով, որ սահմանափակվեն պաշտոնատար անձի և ընտանիքի անդամների անձնագրի, նույնականացման քարտի, բանկային հաշիվների, թանկարժեք գույքի անվանացանկի, ներդրումային ֆոնդերի, բանկերի, հիմնադրամների անվանումների, վճարողների, պայմանագրի կողմ հանդիսացող անձանց անձնական տվյալները: Գույքի և ակտիվների գտնվելու հասցեները «փակել» մասնակիորեն՝ հրապարակելով երկրի և բնակավայրի անվանումները: ➤ Օրենքով սահմանել հայտարարագրերի հրապարակման եղանակի և ժամկետների վերաբերյալ դրույթներ: ➤ Հայտարարագրերի հրապարակմանն առնչվող այլ հարցերի կանոնակարգման լիազորությունը վերապահել Հանձնաժողովին: ➤ Սահմանել ժամկետից ուշ հայտարարագիր ներկայացրած, հայտարարագրի լրացման ու ներկայացման ուղեցույցի պահանջների խախտումներով հայտարարագիր ներկայացրած, հայտարարագիր չներկայացրած պաշտոնյաների և այդ կապակցությամբ պատասխանատվության միջոցների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տեղեկությունների հրապարակման կարգ: